## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ՄԱՐԻԱՄԵԱՆ—ՅՈՎՆԱՆԵԱՆ** օրիորդաց ուսումնարանի խորհրդարանը պատիւ ունի յայտնելու Թիֆլիսի յարգոյ հայ հասարակութեանը, որ նոյեմբերի 6-ին կիւրակէ, առաւօտեան 11 ժամին, Կուսանաց եկեղեցում Ս. Պատարագից յետոյ, կատարվելու է ուսումնարանիս Հիմնադիր հոգաբարձու ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆՑԻ հանգուցեալ տիկնոջ և նրա հանգուցեալ որդոց հոգեհանգիստը, յետոյ, 12 ժամին, ուսումնարանի դահլիճում լինելու է դպրոցիս հիմնադրութեան ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՀԱՆԴԷՍԸ:

ՏԵՍՈՒՉ Ց. ՉԻԳԵԱՆԵԱՆՑ

1—1

---

**Ծախվում է ԷԺԱՆ հեծնելու ՁԻ (եօրղա) և ԹԱՄԲ. Միխայլօվսկայա փողոց, տուն № 129:**

1—3

---

**ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ** սրանով յայտնում է ընդհանուր գիտութեան, որ նոյեմբերի 1-ից ներկայ Թւի քաղաքային հարկերի ընդունելութիւնը կատարվելու է վարչութեան կասսայում ամեն օր առաւօտեան 9 ժամից մինչև 2 ժամ և երեկոյեան 6 ժամից մինչև 8 ժամ: 2—3

---

ВЪ РЕДАКЦІИ ГАЗЕТЫ „МШАКЪ"

**ПРОДАЕТСЯ БРОШЮРА**

НА РУССКОМЪ ЯЗЫКѢ

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ."

**Цѣна 25 копѣекъ.**

Соч. Григорія Арцруни.

---

ЖЕСТЯНКА 20 ЧАШЕКЪ 1 РУБ.

**ШОКОЛАДЪ РЕТАБЛІЕРЪ**

С. СІУ и К°

ВЪ МОСКВѢ.

ПРИ ТРЕБ: ПОЧТОЙ ПРИЛАГАТЬ НА ОТПРАВКУ.

Этикетъ утвержденъ Правительствомъ.

Преслѣдуемъ а подделка будетъ строго закономъ

(5. 10. 25) 17—24

---

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

**ՋՈՒԻՑԵՐԻԱՅՈՒՄ**

Ինձ համար ամենաքաղցր պարտաւորութիւն եմ համարում յայտնել յարգելի հայ ուսուցչական դասին և հայ երիտասարդութեան, որ Զուիցերիայի ՔՈՒՐ քաղաքում կարելի է երկու տարվայ ընթացքում խիստ ԱԺԱՆ, բայց փայլուն պայմանով ՀԵՐԲԱՐՏ-ՑԻԼԼԵՐԱԿԱՆ ուղղութեան (ամենաընդունված) ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆԸ սովորել: Մանրամասնութիւնն իմանալ ցանկացող պարոնները թող բարեհաճեն դիմել ինձ հետևեալ հասցեով:

Въ Швейцарію

An das Lehrerseminar zu Chur
Herrn D. Kalantarianz

in CHUR

SCHWEIZ. 2—2

---

ԲԻԲԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրավաճառանոցում, որ գտնվում է Թիֆլիսում, Զուբալօվի տանը, Գօլօվինսկի պրօսպէկտի վրա, ստացվեցաւ Կ. Պօլսում հայերէն, կովկասեան աշխարհաբար լեզուով տպված, „**ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ**" (հին և նոր կտակարան):

Գինը, գեղեցիկ կազմով 1 ր. 50 կօպէկ է: 5—10.

---

ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՑԱՒԵՐԸ

**ՊԷՊՍԻՆԵԱՆ ԳԻՆԻ „ԲՈՒԴՕ"**

Այդ գինին շատ դուրեկան համ ունի, 25 տարի շարունակ գործ է ածվում հետևեալ գիպվածներում. ԱԽՈՐԺԱԿԻ ԲԱՑԱԿԱՑՈՒԹԵԱՆ, ՍՏԱՄՈՔՍԱՑԻՆ ՑԱՒԵՐԻ և առհասարակ ԱՆԿԱՆՕՆ ՄԱՐՍՈՂՈՒԹԵԱՆ ժամանակ:

Պէպսին „Բուդօ" ճանաչված է փարիզի բժշկական Ակադեմիայից և արժանացաւ առաջին մեդալների ՓԱՐԻԶԻ աշխարահանդիսում 1867 Թ. ՎԻԷՆՆԱՅԻ 1873 Թ. ՖԻԼԱԴԷԼՖԻԱՅԻ 1876 Թ. և ՓԱՐԻԶԻ 1878 Թ.:

Paris: Hottot—Boudault, 7, Avenue Victoria.

Գլխաւոր պահեստը ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Բարձրագոյն հաստատված կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման:

Դէպօ Շահ-Պարոնեանցի, և Գրիմնակի այլ դեղատներում:

---



## ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԳՆԱՑՔՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՆԵՐԻ ԳՆԱՑՔՆԵՐ ԲԱԹՈՒՄԻ ԵՒ ԲԱԳՈՒԻ ՄԷՋ

| Կայարան | Գալիս է | Գնում է | Կայարան | Գալիս է | Գնում է |
|---|---|---|---|---|---|
| | ժամ. րոպէ. | ժամ. րոպէ. | | ժամ. րոպէ. | ժամ. րոպէ. |
| Բաթում . . | — | 8— „ առ. | Բագու . . . | — | 10—23 առ. |
| Սամտրեդի . | 12— 2 | 12—18 | Գանձակ . . | 12—20 | 12—48 գիշ. |
| Րիօն . . . | 1— 9 | 1—22 | Թիֆլիս . . | 7—49 | 8—31 առ. |
| Սուրամ . . | 6— 8 | 6—11 երեկ. | Գօրի . . . | 10—56 | 11— „ |
| Միխայլօվօ . | 6—23 | 6—33 | Միխայլօվօ . | 12—26 | 12—46 |
| Գօրի . . . | 7—53 | 8— 2 | Սուրամ . . | 12—58 | 1— 1 |
| Թիֆլիս . . | 10—25 | 11—11 | Րիօն . . . | 5—54 | 6— 9 երեկ. |
| Գանձակ . . | 6—20 | 6—39 առ. | Սամտրեդի . | 7— „ | 7—20 |
| Բագու . . | 8— 8 երեկ. | — | Բաթում . . | 11—21 երեկ. | — |

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ԹԻՖԼԻՍԻ և ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ

| Կայարան | Գալիս է | Գնում է | Կայարան | Գալիս է | Գնում է |
|---|---|---|---|---|---|
| | ժամ. րոպէ | ժամ. րոպէ | | ժամ. րոպէ | ժամ. րոպէ |
| Սուրամ . . | — | 1—38 գիշեր | Թիֆլիս . . | — | 3—11 |
| Միխայլօվօ . | 1—50 | 2— 5 | Գօրի . . . | 6—30 երեկ. | 6—41 |
| Գօրի . . . . | 4— 6 | 4—30 | Միխայլօվօ . | 8—41 | 8—56 |
| Թիֆլիս . . | 8—առաւ. | — | Սուրամ . . | 9— 8 երեկ. | — |

ԽԱՌՆ ԳՆԱՑՔՆԵՐ ՍԱՄՏՐԵԴԻԻ և ՓՕԹԻԻ ՄԷՋ

| Կայարան | Գալիս է | Գնում է | Կայարան | Գալիս է | Գնում է |
|---|---|---|---|---|---|
| | ժամ. րոպէ | ժամ. րոպէ | | ժամ. րոպէ | ժամ. րոպէ |
| Փօթի . . . | — | 8—45 առ. | Սամտրեդի . | — | 7—30 երեկ. |
| Սամտրեդի . | 11—39 առ. | — | Փօթի . . . | 10—24 երեկ. | — |

---



ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# Զ Ի Ն Գ Ե Ր

Ն Ի Ւ - Ե Օ Ր Կ Ի Մ Է Ջ

**ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԵՆԱԸՆԴԱՐՁԱԿ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ:**

Ծախում է ամենալաւ համարված կարեմեքենաներ նպաստող նոր գործիքներով և նոր պատուանդաններով, որոնք պահպանում են փչանալուց, գործելու ժամանակ աղմուկ չեն հանում և թեթև ընթացք ունեն աշխատանքի ժամանակ, այնպէս որ ամենաթոյլ և ծեր մարդիկ կարող են նրանց կառավարել առանց ոյժերը սպառելու: Ծախվումէ

**ԿԷՍ ՄԻԼԻՕՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻՑ ԱՒԵԼԻ ՏԱՐՎԱՑ ԸՆԹԱՑՔՈՒՄ:**

Այս իրողութիւնը ամենալաւ ապացոյց է Զինգերի կարեմեքենաների համար:

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ. Զինգերի իսկական կարեմեքենաները մեծ վարկ ունեն, որովհետև իրանց գեղեցիկ յատկութիւններով ամենքին զմայլեցնում են և այդ պատճառով ուրիշ գործարանները նրանց կեղծում են և ծախում են Զինգերի իսկական կարեմեքենաների տեղ: Զգուշացնում եմ ձեզ, որ Զինգերի իսկական իւրաքանչիւր կարեմեքենան The Singer Manufacturing C-° ֆիրմայից ունի գործարանի դրօշմներ մեքենայի կոթի և մամուլի վրա. The Singer Manufacturing C-°,

Գ. ՆԷՑԴԼԻՆԳԵՐ, ԹԻՖԼԻՍ, ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՓՈՂՈՑ, ՏՈՒՆ ՄԻՐԻՄԱՆՕՎԻ

ԲԱԹՈՒՄԻ մէջ Պօլիցէյսկայա փողոց, տուն Թերզի-Օղլի:
ՔՈՒԹԱՅԻՍԻ մէջ Միխայլօվսկայա փողոց, տուն Շնէյդերի:
ԲԱԳՈՒԻ մէջ Միխայլօվսկայա փողոց, տուն Միրզա-Աւագովի:
Իւրաքանչիւրին միջոց տալու համար ձեռք բերել Զինգերի ամենաօգտակար և իսկական կարեմեքենան կարելի է գնել փոքր մուտքերով, այսինքն շաբաթական 1 ր. 50 կ. վճարելով առանց իսկական գինը բարձրացնելու: Հնացած մեքենաները խանութը փոխում է: 25—50 (1)